1246

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«05» 02 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 025 - 25

Նախաձեռնող՝ *«Օն Դիզայն» ՍՊԸ*
Արմավիր, ք. Մեծամոր 0910 /Շ/10/18

Գործունեությունը՝ *Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցում*
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 025 - 25

«05» փետրվար 2025թ.

Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Օն Դիզայն» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան, Շենգավիթ վարչական շրջան

Ներածական մաս. «Օն Դիզայն» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում կառուցել մանկապատանեկան մարզահամալիր:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Սույն գործունեության նախագծման համար հիմք են հանդիսացել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայականը (ծածկագիր՝ 01-011-0238-0025, 01-011-0238-0039, 01-011-0238-0038) և քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Կառուցապատվող հողամասի (0.374813 հա, 0.0312 հա, 0.0422 հա) նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, այլ հողեր, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի սահմաններում, նրա հյուսիսարևմտյան մասում, մակերեսը հարթ է, ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են ծովի մակարդակից 889.0-890.0 մետրի սահմաններում: Նախատեսվող գործունեության տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են 20 մետրից խորը հորիզոնների վրա:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, բացակայում են:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվող գործունեության տարածքը նախկինում մասամբ արդեն բարեկարգվել է: Մարզահամալիրի շենքը նախատեսվում է տեղակայել բարեկարգումից ազատ տարածքում, իսկ այն հատվածները, որոնց վնասումը շինարարության ժամանակ կլինի անխուսափելի՝ շինարարության ավարտին նորից կբարեկարգվեն:

Մարզահամալիրի շենքը կունենա 2 մասնաշենք և բաղկացած կլինի 1 ստորգետնյա և 3 վերգետնյա հարկերից:

Ստորգետնյա հարկի բարձրությունը կլինի 3.6 մ, վերգետնյա 1-ին հարկի բարձրությունը՝ 4.8 մ, 2-րդ և 3-րդ հարկերի բարձրությունները՝ 5.40 մ: Ստորգետնյա հարկում նախատեսված է ավտոկայանատեղի, որն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց՝ 250-300 մարդու համար: Ստորգետնյա հարկում նախատեսված են 3 սանհանգույցներ, որոնցից մեկը՝ սահմանափակ կարողությամբ անձանց համար: Ստորգետնյա հարկն ապահովված կլինի օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ:

Առաջին մասնաշենքի առաջին հարկում տեղակայված կլինեն ընդհանուր մարզման մարզասրահներն իրենց հանդերձարաններով, ադմինիստրատիվ սենքերը, բժշկի կաբինետն իր սպասասրահով, ընդհանուր օգտագործման սանհանգույցներ, սպասարահ՝ արտահագուստի հանդերձարանով:

Երկրորդ հարկում կլինեն ադմինիստրատիվ գրասենյակներ, ինչպես նաև ըմբշամարտի մարզասրահ՝ իր հանդերձարաններով, մերսման սրահներով և շոգեբաղնիքով: Երրորդ հարկում ևս առկա կլինեն ադմինիստրատիվ գրասենյակներ, բոքսի մարզասրահ՝ իր հանդերձարաններով, մերսման սրահներով և շոգեբաղնիքով:

Երկրորդ մասնաշենքում տեղակայված կլինեն բասկետբոլի դահլիճը՝ 174 նստատեղով, բուֆետ-սրճարանը, որը մարզիկների համար կծառայի որպես ճաշարան, իսկ հանդիսատեսի համար որպես սրճարան՝ հնարավորություն տալով վերևից դիտելու բասկետբոլային խաղերը:

Մասնաշենքերի առաջին (զրոյական) հարկում տեղակայված մարզադահլիճների համար կլինեն 3 աստիճանավանդակներ, որոնցից երկուսն ապահովված կլինեն վերելակներով: Աստիճանավանդակները նկուղային հարկում, ինչպես նաև առաջին հարկից առանձնացված կլինեն հակահրդեհային ինքնափակվող դռներով և հրակայուն ապակիներով:

ՀՀՇՆ IV-11.07.01.2006 «Շենքերի և շինությունների մատչելիությունը բնակչության սակավաշարժուն խմբերի համար» շինարարական նորմերի պահանջներով նախատեսվել են թեքահարթակներ: Մարզահամալիրն ապահովված է լինելու նաև հրդեհային ազդարարման ավտոմատ համակարգերով, էվակուացիոն ուղիներով, ելքերով և այլն:

Մարզահամալիրին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն, որը կունենա 5.5 մX7մ առանցքային չափեր:

Կոյուղին նախատեսվում է միացնել Ներքին Չարբախ 3-րդ փողոցով անցնող 300 մմ տրամագծով կոյուղատարին:

Նախագծվող մարզահամալիրի ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացները կազմակերպվելու են՝ համաձայն «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Էլեկտրամատակարարումն իրականացվելու է՝ համաձայն «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- Տարածքի ընդհանուր մակերես՝ 4482.13 (100%),
- առկա խաղահրապարակների ընդհանուր մակերես՝ 301.66 (6.73%),
- առկա խաղահրապարակի ճեմուղի՝ 494.33 (11.03%),
- առկա փողոց՝ 294.47 (6.57%),
- առկա կանաչապատ տարածքի մակերես՝ 681.98(15.22%),
- մարզահամալիրի շենքի կառուցապատման մակերես՝ 2061.67 (46%),
- մարզահամալիրի շենքի սալվածքի մակերես՝ 540.46 (12.06%),
- կաթսայատան շենքի մակերես՝ 48.72 (1.09%),
- կաթսայատան սալվածքի մակերես՝ 22.97 (0.51%),
- կառուցվող մարզահամալիրի շենքի ավտոկայանատեղիի ճանապարհ՝ 11.75 (0.26%),
- նախատեսվող կանաչապատման մակերես՝ 24.12 (0.53%):

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը կկազմի՝ 9154.43 խմ, որից հետլիցքը՝ 1122.29 խմ: 825 խմ ծավալն իրենից ներկայացնում է հողաբուսական շերտ, իսկ ավելացած 7207.14 խմ հողային զանգվածը կհեռացվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Տարածքի մոտ 1772 քմ իրենից ներկայացնում է բարեկարգված և կանաչապատ հատված, որտեղ ներկայումս առկա են խաղահրապարակ՝ հագեցած մարզային սարքերով ու սարքավորումներով, մանկական խաղահրապարակ, ճեմուղի, 682 քմ կանաչ գոտի: Տարածքի սահմանագծի երկայնքով տնկված են շուրջ 40 հատ պավլովնիա տեսակի ծառեր, որոնք գործունեության իրականացման արդյունքում չեն հատվելու: Նախատեսվում է գազոնի տեսքով ավելացումներ՝ 24.1 քմ չափով:

Տարածքում առկա է ջրի մետաղական ռեզերվուար, որում ամբարված ջրից իրականացվում է տարածքի ոռոգումը: Ոռոգման ջրի աղբյուր են հանդիսանում ջրամատակարարման համակարգից վերցված ամբարված ջուրն, ինչպես նաև հավաքված անձրևաջրերը:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում, շինարարական տեխնիկայի վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (ծածկող պաստառների առկայությամբ) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, շրջակա տարածքների մաքրում շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու համար, սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը:

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, տարածքի մաքրման, որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև կապալառուի աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ մակերևութային հոսքեր չառաջանան և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

Հողային ռեսուրսների պահպանության համար՝ շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով նախատեսվում է այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, աշխատանքների ավարտից հետո տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր, տարածքի բարեկարգում և շինաղբից մաքրում:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա՝ շինարարական աղբն է և փորման աշխատանքների ընթացքում առաջացած հողային զանգվածը, որոնց տեղափոխումը կիրականցվի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն, շինարարության մեջ բանվորներին ականջակալներով ապահովում: Նախատեսվող աշխատանքների աղմուկի և թրթռումների մակարդակը կանխատեսվում է, որ աշխատատեղերում և մոտակա բնակելի տարածքում չեն գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ երեք ամիսը մեկ պարբերականությամբ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի հետ: Բողոքների առկայության դեպքում կկատարվեն նաև լրացուցիչ չափումներ և, ըստ անհրաժեշտության, կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ:

Մարզահամալիրի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx) արտանետումների որակական և քանակական պարամետրերի չափումներ օդի որակի մոնիթորինգի սարքավորումների տեղադրմամբ, որոնք կունենան առցանց հարթակի հասանելիություն և համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորություն,
- հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
- շահագործվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցների պարբերական ստուգումներ օրենսդրությամբ սահմանված կարգով, որի պարբերականությունը կորոշվի կախված կիրառվող տեխնիկայի և տրանսպորտային միջոցի տեսակից և շահագործման աշխատաժամանակից,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:

Շինարարության ողջ ընթացքում մշտադիտարկումների համար հատկացվող գումարի չափը գնահատվում է մոտ 1.8 մլն. ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության գնահատման և փորձաքննության փուլերում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսումներին՝ գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից, Շենգավիթ վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինաղբի և թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:
3. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան:
4. Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
5. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Օն Դիզայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Չարբախ 3-րդ փողոց 31/13 հասցեում Արթուր Աբրահամի անվան մանկապատանեկան մարզահամալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝ Սվետլանա Կիզիրյան